

լատինական տառերու օրէնքին թաթարական եւ իւրամ հանրապետութեանց սահմաններուն մէջ գործած նուաճումներուն վրայ զարգացար մը կրնան տալ «Սորհրդ. Հայաստան»ի հետեւեալ սողերը (15 Յուլիս, 1928) .

«Լատինական տառերի ընդհանրացման աշխատանքները Միջին Ասիայում սկսուել են 2-րդ Համազումարից յետոյ : Հինգ ամսուայ ընթացքում յաջողուել է տառեր առնել, դրաշար գտնել, ուսուցիչներ պատրաստել եւայլն : Լատինական տառերն ընդհանրացնող Կենտրոնական Կոմիտէի տեղեկութիւնների համաձայն, Միջին Ասիայում լուրջ պատրաստութիւններ են տեսնուում . օրինակի համար Միջին Ասիայի բոլոր հանրապետութիւններում պայքար է մղուում ուսուցիչների վերապատրաստութեան համար : Թիւրքմէնիստանի ամբողջ ուսուցիչները (500 հոգի) կանչուել են Աստղարագ, հետեւելու լատին տառերի գործածութեան դասընթացներին : Այս տարուանից Թիւրքմէնիստանի առաջին աստիճանի բոլոր դպրոցներում պարտադիր կերպով մտցուելու է նոր այբուբենը : Ուզբէկստանում եւ այլ հանրապետութիւններում նման միջոցներ են ձեռք առնուել : Ուզբէկստանում բացուել են 73 դասընթացներ եւ պատրաստուել 1920 ուսուցիչներ : Նախապէս կատարուած աշխատանքների շնորհիւ, մինչեւ հիմա պատրաստուում են 2270 հոգի լատին այբուբենի համար : Տպագրական գործն էլ լուանալու վրայ է : Կարճ ժամանակամիջոցում տպագրուել են մի շարք գրքեր : Ուզբէկստանում տպագրուել են «Նոր Այբուբենի Բարեկամների Ընկերը» գիրքը եւ ուրիշներ : Առաջին գիրքը հրատարակուել է 4 անգամ : Մի ամսաթերթի վերջին քիթածը 5000-ից բարձրացել է 6000-ի : Տպագրական ծրագրի համաձայն, այս տարի նոր այբուբենով 250 մամուլ գիրք է տպագրուելու : Միջին Ասիայում լատինական տառերի գործածութիւնն աւելի ընդհանրացնելու խընդիրը հանդիպում է մեքենայի տառեր հայթայթելու դժուարութեան : Տպատանում նոր այբուբենի տարածման գործը յետ է մնացել՝ հնչիւնների տարբերութիւնների պատճառով : Նրանց համար անհրաժեշտ էր ստեղծել տա-

ռերի նոր ձեւեր, որն արդէն իրագործուել է եւ ենթարկուել է Սորհուրդների վաւերացման : Այսպիսով լուծուած կը լինի նաեւ Տաղատանի նոր այբուբենի հարցը» :

Մուսթաֆա Բեմալը տուաւ աղջանչանը՝ լատինական տառերու գործածութեան : Առաջին անգամ ըլլալով զբաւ իր ստորագրութիւնը Աֆղանիստանի էնկիւրիի ղեսպանին նուիրուած լուսանկարի մը վրայ : Եւ սկսած են իրեն հետեւիլ իր շրջապատը, ինչպէս նաեւ պարզ պաշտօնէութիւնը անգամ :

Այսպէս, համաձայն թուրք թերթերու, Կէմալէի զայնուգամին հրահանգով, յիշեալ կառավարչատան բոլոր պաշտօնատէսները լատինական գիրերով կը ստորագրեն պաշտօնական հաղորդագրութեանց տակ : Այդ թերթերէն մէկ քանին այլ հիմակուրնէ իրենց ընթերցողները կը վարժեցնեն լատիներէնով գրուած թուրքերէնի, ամէն օր տալով մանր-մուկը նորութիւններ : Եւ ինչպէս որ նախապէս զբեցինք, վերաչինուած քերականութեան կանոնները գէպի պարգութիւն կը տանին թուրքերէնը, վտարելով անկէ պարսկերէն եւ արաբերէն իրթնարանութիւնները : Այս մտայնութեան մէկ արտայայտութիւնն է Տէֆթէրատրութեան այն շրջաբերականը, զրկուած բոլոր ելմբուական մասնաճիւղերուն, պատուիրելով, որ իրեն զրկուած գրութիւնները պարզ եւ հասկնալի թուրքերէնով կազմուած ըլլան, առանց արաբական աստութիւններու :

Ուրիշ խօսքով, թուրքերը, գրաբառի եւ աշխարհարառի պայքար մը կը մղեն բաւական ժամանակէ ի վեր, երբ հին եւ փոշոտ լեզուին, դարձուածքներուն, քերականական բարդութիւններուն կողմնակիցները զառամած սեպուեղի մէկ փոքր հատուածն են, իրենց գէմ ունենալով թուրք մտաւորականութեան ջախջախիչ մեծամասնութիւնը եւ ամբողջական եւրիտատարգութիւնը : Այսպիսի պայքարի մը ելքը ինչո՞ւ աղէտարեր նկատել քեմալականներուն համար : Պետութեան մը հովանաւորութիւնը, նախաձեռնութիւնը, քուէարկած օրէնքներն ու պատրաստած մեքոսները բոլոր-